Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 482 - Ա
որոշման

ԾՐԱԳԻՐ

«ՓԱՄԲԱԿԻ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՑԱՆՑԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ»

1.	Ծրագրի նպատակը	«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամը հավատարիմ մնալով իր համայնքների զարգացման առաքելությանը այս ծրագրով նախատեսում է ընդլայնել և բարելավել Փամբակ և Թումանյան համայնքների բնակիչներին մատուցվող տրանսպորտային ծառայությունների որակը: Հիմնադրամը ձեռք է բերել մեկ հատ ՊԱԶ մակնիշի ավտոբուս, որը անհատույց օգտագործման պայմանով պարտավորվում է հանձնել Փամբակ համայնքի «Փամբակ կոմունալ» ՀՈԱԿ-ին: Ներկայումս գործող տրանսպորտային կապը այդ համայնքներում և դրանց միջև ապահովվում է մեկ հնամաշ և վտանգավոր ավտոբուսի միջոցով՝ Վանաձոր-Եղեգնուտ-Դեբետ-Դսեղ երթուղով: Վերոնշյալ ավտոբուսը շահագործվում է օրական մեկ անգամ, իսկ կիրակի օրերին ընդհանրապես չի շահագործվում: Ավտոբուսը ՀՈԱԿ-ի կողմից շահագործվելու է որպես համայնքային տրանսպորտ, սակայն մատուցվող ծառայության արժեքը (քաղաքացիներից գանձվող գումարը) հնարավորինս մատչելի կլինի, հաշվի առնելով հիմնադրամի ներդրումը: Երթուղին մեկ օրում կկազմակերպվի առնվազն 2 անգամ: Հիմնադրամը հույս ունի, որ այս ծրագրի արդյունքում կզարգանա նաև միջքաղաքային տուրիզմը:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Նախատեսվում է ծրագրի շրջանակներում օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով՝ օրենքով սահմանված արտոնություններից:

3.	Բարեգործը	«Չիլդրեն Օֆ Արմենիա ֆանդ Ինք.» (Նյու Յորք, ԱՄՆ, 149 5րդ ավենյու, սենյակ 500 (Children of Armenia Fund Inc. 149 5th Ave., Suite 500, New York 10010, USA) և դոկտոր Կարո Հ. Արմենը
4.	Ծրագիրը կատարողը	«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամ (ՀՀ քաղ. Երևան 0010, Մելիք Ադամյան 2/2, ՀՎՀՀ՝ 02569972)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	ՀՀ Լոռու մարզ Սոցիալական
6.	Ծրագրի բյուջեն	47,000,000 ՀՀ դրամ
7.	Բարեգործությունն ստացողը	ՀՀ Լոռու մարզ՝ Փամբակ և Թումանյան համայնքներ
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2022 թվականի հունիսի 15-ից մինչև 2023 թվականի օգոստոսի 1-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1. ՊԱԶ մակնիշի թվով 1 /մեկ/ հատ ավտոբուս՝ գործարանային կոմպլեկտավորմամբ ընդհանուր 45,000,000 /քառասունհինգ միլիոն/դրամ ծրագրի գործունեության ամբողջ ընթացքում: 2. ՊԱԶ մակնիշի ավտոբուսը հանձնվելու է անհատույց օգտագործման Փամբակ համայնքին: Համայնքի կողմից ավտոբուսի բարեխիղճ օգտագործման դեպքում նախատեսվում է 5 տարի անց այն ի սեփականության հանձնել համայնքին: 3. Աուդիտորական ծառայություն՝ ընդամենը՝ 2,000,000 /երկու միլիոն/դրամ, ծրագրի ամբողջ ընթացքում:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1. 22.04.2022 թվականին ներմուծվել է 45,000,000 /քառասունհինգ միլիոն/դրամ արժողությամբ ավտոբուս:

		2. Նախատեսվում է կնքել ծառայության մատուցման պայմանագիր 2,000,000 /երկու միլիոն/դրամի շրջանակներում, ծրագրի ամբողջ ընթացքում:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը	1. Կազմակերպչական ծախսեր ընդամենը 2,000,000 /երկու միլիոն/դրամ: 1.1 Աուդիտորական ծառայություն ընդամենը 2,000,000 /երկու միլիոն/դրամ, ծրագրի ամբողջ ընթացքում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Նախատեսվում է համագործակցել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի և Փամբակի ու Թումանյանի համայնքապետարանների հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ ՀԱ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

29.06.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ